

**ՄԵՍՐՈՊ ՎՐԴ. ՄՈԿԱՅԵԱՆ.**—Մբ. Վարազայ վանքին. Ծ. 1836 ին. 1872 ին ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը. 1892 ին կը վախճանի Երուսաղէմի մէջ. Խրիմեան Հայրիկ կը գրէ իր հետեւեալ տապանագիրը. «Աստ ի հանգիստ կայ Տէր Մեսրոպ վարդապետ Վարազայ տան հաւատարիմ տնտես, որ երեսուն տարի ամբողջ վարեց տեսչութեան պաշտօն Վարազայ խաչին, խոնջած մշակ եկաւ հանգչեցաւ ի վերջոյ Սիօնի հովանեաց տակ իւր լծակից Ղևոնդին քով, մին հողին ու հացին մշակ, միւսն զրէին ու գրին սիրահար, ասացէք Աստուած ողորմի զոյգ հանգուցելոց հոգիներուն ամէն:

Ծնեալ 1836, վախճանեալ 1892»:

**ՄԵՍՐՈՊ ՎՐԴ. ՊԱՂՏԱՏԻ.**— Առ. Պաղտատի. 1855 ին ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը, եւ այս առթիւ Պաղտատի ժողովրդեան հանրագիրովը և Յակոբոս պարքի յանձնարարականով կ'ստանայ ծայրագունորքեան ստիճան Ս. Յակոբի վանքին մէջ: Իր նախածեռնութեամբ կառուցուած են Պաղտատի Ս. Երրորդութեան եկեղեցին 1852 ին, Մուսուլի Ս. էջմիածին եկեղեցին 1857 ին: Վախճանած է Պաղտատի մէջ:

**ՄԵՍՐՈՊ ՎՐԴ. ՊՈՂՍԵՅԻ.**— Մբ. Չռ. 1804ին. 1812 ին ընդօրինակած է Մարտիրոս եպօսի 1771ին գրի առած կոնդակներու և բարեազիրներու հաւաքածոն (ՄՁ. Թ. 158), ինչպէս նաև նոյն թուականին Պետրոս եպօ. Բերդումեանի Աստուածաբանական գիրքը, որ յօրինուած է 1869ին: Վախճանած է Երուսաղէմի մէջ 1833 ին. իր տապանագիրն է հետեւեալը. «Այս է տապան հանգստեան բնիկ միաբան Պօլսեցի ծերունի Մեսրոպ վարդապետին որ հանգեաւ. ոյք հանդիպիք տուք զողորմին ի ՌՄՁԲ. յուլիս 29 (=1833):

**ՄԵՍՐՈՊ ՎՐԴ. ՍՏԵՓԱՆԵԱՆ, ԱՂԹԱՄՍՐՅԻ.**—Մբ. Ծ. 1829 ին. Չռ. Աղթամարի մէջ 1866 ին, կը միաբանակցի Ս. Յակոբի վանքին 1869 ին. ՏՓ. 1876 ին. հիւրընկալ 1878 ին. կը հրատարի և կը մեկնի 1880 ին:

**ՄԵՍՐՈՊ ՔԶ. ՍԿԻՒՏՈՐՅԻ.**— 1857 ին ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը. վերադարձին Պոլսի մէջ կը հրատարակէ Աբրահամ պարքի տապանագիրին ընդօրինակութիւնը. (Երեւակ, 1858. էջ 275):